Հաստատում եմ՝

Երևանի Տարածաշրջանային N1 պետական քոլեջի տնօրեն

_____ Պ. Սանթրոսյան

« 06 » 05 20 22թ.

ԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ N1 ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ, ՔՈԼԵՋԻ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՐԱԿՆԵՐԻ, ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ, ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ, ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՇԱՀԱԿԻՑՆԵՐԻ ԿԱՐԾԻՔՆԵՐԻ ՎԵՐՀԱՆՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1. Քոլեջի կողմից մատուցվող ծառայությունների, դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողական, դասախոսական, ներքին և արտաքին շահակիցների հարցման (այսուհետև՝ հարցում) կարգը սահմանում է Երևանի տարածաշրջանային N1 պետական քոլեջի (այսուհետ՝ Քոլեջ) սովորողների կողմից Քոլեջի պրոֆեսորադասախոսական/ մանկավարժական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, ռեսուրսների արդյունավետության բարձրացմանն ուղղված գնահատման հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգ:

Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման և գնահատման հարցման անցկացման կարգ:

Քոլեջում կազմակերպվող և իրականացվող ներկայացումների, նկարահանված կարճամետրաժ ֆիլմերի, բաց դասերի, մրցույթների, վարպետաց դասերի վերաբերյալ արտաքին շահակիցների կարծիքների վերհանման հարցման անցկացման և գնահատման կարգ:

2. Հարցման անցկացումը

2.1. Ուսանողների կողմից դասախոսների դասավանդման որակի հարցումն իրականացվում է առաջին կիսամյակի քննաշրջանի ավարտից հետո (մարտ-ապրիլ ամիսներին)՝ այն բաժիններում, որտեղ դասավանդել է գնահատվող դասախոսը: Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների վերհանման և գնահատման հարցումը անցկացվում է ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտին: Մյուս հարցումները հաջորդում են իրականացվող միջոցառումներին:

2.2. Հարցումները կազմակերպվում և իրականացվում են Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի կողմից:

2.3. Հարցումն իրականացվում է սույն կարգին կից գնահատման հարցաթերթիկներով /անանուն/: Դասախոսների որակի գնահատումը իրականացվում է 5 միավորանոց սանդղակով: Պրոֆեսորադասախոսական կազմի կարիքների, արտաքին և ներքին շահակիցների կարծիքների, ներկայացումների, նկարահանված կարճամետրաժ ֆիլմերի, բաց դասերի, մրցույթների, վարպետաց դասերի գնահատման հարցումները գնահատվում է՝ գերազանց, լավ, բավարար կամ անբավարար սկզբունքով:

3. Հարցման արդյունքների մշակումը և օգտագործումը.

3.1 Հարցման արդյունքները մշակվում են Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածքի կողմից:

3.2. Հարցման արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնում, մանկավարժական խորհրդի նիստում: Անհրաժեշտության դեպքում ձեռնարկվում են համապատասխան քայլեր՝ ուղղված որևէ դասախոսի/մանկավարժի դասավանդման որակի բարելավմանը:
3.3.Դասախոսն/ մանկավարժն իրավունք ունի ծանոթանալու հարցման՝ իրեն վերաբերող կարծիքներին:

3.4.Գնահատման հարցաթերթերը պահպանվում են 3 տարի՝ Քոլեջի ներքին որակի ապահովման ենթակառուցվածում:

3.5. Կախված հարցման արդյունքներից տնօրենը իրավասու է մանկավարժական խորհրդի քննարկմանը ներկայացնել դասախոսին/մանկավարժին խրախուսելու կամ աշխատանքային պայմանագիրը վաղաժամկետ լուծարելու վերաբերյալ հարցը: